ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Ռոբերտ Թաթոյան

1. Հայրենադարձության իրականացման արդիականությունը

Հայրենադարձության խնդիրը քննարկելիս անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին. որքանո՞վ է այսօր հայրենադարձության իրականացումը հրատապ, որո՞նք են հայրենադարձությունը հրամայական դարձնող գործոնները, ի՞նչ խնդիրների լուծմանն է ուղղված հայրենադարձությունը:

Հայրենադարձության իրականացման արդիականությունը պայմանավորող հիմնական գործոններից է երկրում տիրող ժողովրդագրական իրավիճակը: Հայաստանն այսօր ժողովրդագրական համաղետի մեջ է: Անկախության ձեռքբերումից հետո անցած տասնհինգ տարիների ընթացքում երկրից արտագաղթել է ավելի քան մեկ միլիոն մարդ: Թեև վերջին տարիներին արտագաղթի հոսքը որոշ չափով նվազել է, սակայն դադարելու միտում բնավ չունի: Նույն տարիներին արձանագրվող բնական աճի դրական ցուցանիշները «կորչում» են արտագաղթի համատեքստում, հասարակությունն օրըստօրե ծերանում է:

Պետք է փաստել, որ ստեղծվել է մի վիճակ, երբ հայ ժողովուրդը ժողովրդագրական առումով տանուլ է տալիս իր բոլոր մահմեդական հարևաններին, մինչդեռ դրանցից երկուսը մեզ թշնամի պետություններ են:

Գոյություն ունի երկրի ժողովրդագրական իրավիճակի բարելավման երեք հիմնական բաղադրիչ՝ արտագաղթի ծավալների կրճատում, ծնելիության խթանում և ներգաղթ՝ հայրենադարձություն: Եթե առաջին երկու բաղադրիչներն այսօր գտնվում են հասարակական քննարկման ոլորտում, ապա նույնը չի կարելի ասել վերջինի մասին:

Հայրենադարձությունը ոչ միայն մեր պետության, այլև Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերների լուծում է: Ցանկացած սփյուռք ժամանակի ընթացքում դատապարտված է վերանալու: Հայերիս պարագայում սփյուռքյան համայնքների անհետացման գործընթացները շատ ավելի արագ են ընթանում՝ շնորհիվ մեր ազգային բնավորությանը հատուկ մի

շարք գծերի: Ներկայումս աշխարհում ընթացող գլոբալացման գործընթացները ևս նպաստում են սփյուռքի քայքայմանը:

Հայկական Սփյուռքն անհետանում է: Ուծացել է Կենտրոնական Եվրոպայի երկրներ 13-15-րդ դդ. արտագաղթած հայությունը, դադարել են գոյություն ունենալուց Հնդկաստանի, Բաքվի համայնքները: Մենք այսօր գրեթե կորցրել ենք արևմտյան երկրների հայության այն շերտը, որը ձևավորվել էր մինչև Մեծ եղեռնը կամ Մեծ եղեռնից անմիջապես հետո: Արևմուտքում ներկայիս հայ համայնքների կորիզը, հիմնականում, կազմում է Մերձավոր և Միջին Արևելքից ու Հայաստանից վերջին տարիներին արտագաղթած հայությունը:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ կան որոշ գործոններ, որոնք դանդաղեցնում են ուծացման գործընթացները: Դրանցից հիմնականներն են հայոց անկախ պետականության գոյությունը, բարձր տեխնոլոգիաների զարգացման միջոցով հայոց լեզվի և մշակույթի հասանելիության աստիճանի բարձրացումը, հայրենակիցների հետ շփումների հասանելիության մեծացումը և այլն: Սակայն նշենք նաև, որ սրանք գործում են գերազանցապես անհատական մակարդակում:

Հայրենադարձության հրատապությունը պայմանավորող գործոն է նաև այն, որ այսօր մի շարք երկրներում հայկական Սփյուռքն ստիպված է դիմագրավել իր ֆիզիկական անվտանգությանն սպառնացող մարտահրավերի: Նման սպառնալիքն առավել սուր կերպով առկա է Մերձավոր Արևելքի երկրներում և, թերևս, Ռուսաստանում:

Մերձավոր Արևելքում օրըստօրե խորացող ու ընդլայնվող անկայունությունը տարածաշրջանի երկրներում բնակվող մեր հայրենակիցներին պարտադրում է բռնել գաղթի ճանապարհը, ինչի հետևանքով Լիբանանի, Իրաքի, Սիրիայի, Իրանի հայկական գաղութների քայքայման գործընթացն աստիճանաբար արագանում է: Հայերը հիմնականում տեղափոխվում են ԱՄՆ և Արևմտյան Եվրոպայի երկրներ, որտեղ, ինչպես նշեցինք, ուծացման գործընթացները, ի տարբերություն իսլամական երկրների, շատ ավելի արագ են ընթանում:

Ռուսաստանի հռչակած նոր ժողովրդական քաղաքականությունը, որի նպատակն է ԱՊՀ ժողովրդագրական ռեսուրսների ներգրավմամբ (հայրենադարձության, աշխատանքային ներգաղթի միջոցով) իր ժողովրդագրական խնդիրների լուծումը, ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ առումով բացասաբար է անդրադառնալու Հայաստանի ժողովրդագրական կացության վրա՝ նպաստելով Հայաստանից Ռուսաստան բնակչության արտագաղթի ծավալների մեծացմանը:

Անօրինական աշխատանքային ներգաղթյալների օրինականացման պարզեցված կարգը նպաստելու է նաև արդեն իսկ Ռուսաստանի տարածքում սեզոնային կամ մշտական հիմունքներով բնակվող հայ ներգաղթյալների՝ նոր բնակության վայրում առավել հիմնավորմանը և նոր միջավայրին առավել համարկմանը (ինտեգրմանը):

Ռուսաստանի իշխանությունները նաև փորձում են կտրել երկրի քաղաքացիություն ընդունած ներգաղթյալների իրավական կապերն իրենց նախկին հայրենիքների հետ: Այսպես, 2002թ. հուլիսի 1-ից գործող քաղաքացիության մասին նոր օրենքով Ռուսաստանի քաղաքացի կարելի է դառնալ միայն հրաժարվելով նախկին քաղաքացիությունից: Վերջին ժամանակներս, Հայաստանում երկքաղաքացիության մասին օրենքի ընդունման համատեքստում, Ռուսաստանի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ հանդես եկան հայտարարություններով, որոնցում կտրականապես դեմ արտահայտվեցին այն գաղափարին, որ Ռուսաստանի քաղաքացին կարող է հանդիսանալ նաև մեկ այլ երկրի քաղաքացի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսաստանի իշխանությունները հռչակում են ներկա և ապագա ներգաղթյալների առավել արագ համարկման նպատակը՝ պարտադրելով ռուսաց լեզվի իմացությունը, խոչընդոտելով էթնիկական համախմբված բնակչություն ունեցող «էթնիկական գոտիների» ստեղծմանը, ձգտելով բացառել որևէ էթնիկական խմբի կողմից որևէ ոլորտի մենաշնորհայնացումը և իրականացնելով այլ միջոցառումներ, կարելի է արձանագրել, որ Ռուսաստանում ինչպես ներկա, այնպես էլ ապագա հայ ներգաղթյալների ուծացման գործընթացներն էլ ավելի են ուժգնանալու: Դրան նաև նպաստելու են Ռուսաստանի հայ գաղութում առկա մի շարք գործոններ, որոնցից ամենակարևորներն են գաղութի հասարակական անհամախմբվածությունը, հասարակական, կրթական, կրոնական և մշակութային կառույցների բացակայությունը կամ թերզարգացածությունը, հատկապես՝ Ռուսաստանում հայկական դպրոցների չնչին թիվը և այլն:

Փաստենք, սակայն, որ հայերի ուծացման գործընթացը, թերևս, որոշ չափով դանդաղեցնում է Ռուսաստանում օրեցօր ուժգնացող ազգայնա-կանության ալիքը, ինչի հետևանքով զորեղանում է այլատյացությունը, ազգային հողի վրա սպանությունները դառնում են սովորական երևույթ:

Հայաստանը չունի Մերձավոր Արևելքի երկրների հայ գաղութների քայքայումը, դեպի ազգայնամոլության անդունդը գլորվող Ռուսաստանի ընթացքը կասեցնելու ներուժ: Սակայն մեր երկիրը պարտավոր է տեր կանգնել իր բոլոր այն հայրենակիցներին, որոնց մարդասիրական համա-

ղետ է սպառնում, տեր կանգնել աշխարհում ընդունված միջոցով, որն է հայրենադարձությունը:

Արդ, Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունները պետք է կառուցել ոչ թե Սփյուռքի ուծացմանը դիմակայելու և լեզվամշակութային ինքնության կորստի կանխման նպատակից ելնելով, քանի որ այդ ուղղությամբ գործադրվելիք բոլոր միջոցներն ի զորու չեն լինելու կասեցնել հայկական գաղութների քայքայումը, այլ որպես գերագույն նպատակ հռչակելով աշխարհասփյուռ հայության ներգաղթը՝ հայրենադարձությունը:

2. Հայրենադարձության քաղաքականության հիմնական դրույթները

- Հայրենադարձության ծրագիրը պետական և համազգային ծրագիր է, դրա կազմակերպումն ու իրականացումը պետք է ընդգրկվեն Հայաստանի պետականության հիմնական և, մանավանդ, մնայուն ու տևական գործառույթների մեջ:
- Հայրենադարձության մեկնարկին պետք է նախորդի հայրենադարձությունը պետականորեն կանոնակարգող փաստաթղթերի ընդունումը: Այդ փաստաթղթերից կարևորագույնը Հայրենադարձության մասին օրենքն է, որով, մասնավորապես, պետք է սահմանվեն հայրենադարձի կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, քաղաքացիություն ստանալու կարգը և հարակից այլ հարցերը: Օրենքի մեջ պետք է սահմանվեն նաև հայրենադարձության համար պատասխանատու պետական մարմին(ներ)ը, դրանց գործառույթները:
- Հայրենադարձության ծրագրի իրականացմանը զուգընթաց հայրենադարձությունը կանոնակարգող օրենքը կամ օրենքները, հայրենադարձության գործընթացը կազմակերպող կառույցները ենթակա են լինելու շարունակական բարեփոխման և բարելավման:
- Առաջնահերթ հայրենադարձվելու հնարավորություն պետք է ստեղծվի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների և Ռուսաստանի հայ գաղութների համար, որտեղ սփյուռքահայերի հայրենադարձվելու ցանկությունը շատ ավելի իրական է, քան Եվրոպայում և ԱՄՆ-ում:
- Պետությունը պետք է տեղեկատվական և, ըստ հարկի, այլ կարգի օժանդակություն ցուցաբերի հայրենադարձվել ցանկացող անձանց: Հայրենադարձության գործընթացի տեղեկատվական ապահովման գործառույթը և հայրենադարձների նախնական հաշվառումը պետք է ստանձնեն դեսպանատները:
- Պետությունը պետք է ապահովի հայրենադարձվել ցանկացող այն

անձանց և նրանց ընտանիքի անդամների տեղափոխումը, որոնք ի վիճակի չեն լինելու ինքնուրույն հոգալ իրենց անձի և/կամ բեռի տեղափոխման ծախսերը, Հայաստանի Հանրապետության տարածքում սեփական բնակարան չունեցող անձինք հայրենադարձվելու իրավունք կարող են ստանալ ՀՀ կառավարության կողմից հաստատված բնակավայրերից մեկում բնակարան ստանալու և մշտապես բնակվելու համաձայնություն տալու դեպքում:

- **Հայրենադարձին տրվող արտոնություններ.** Անհրաժեշտ է առավելագույնս հեշտացնել հայրենադարձի համար Հայաստան տեղափոխման և հիմնավորման գործը՝ սահմանելով մի շարք արտոնություններ հայրենադարձության գործընթացի բոլոր փուլերում՝ մուտքի արտոնագիր ստանալու պահից սկսած մինչև ՀՀ քաղաքացիության ձեռքբերումը և, առանձին դեպքերում ու հարցերում, ՀՀ քաղաքացի դառնալուց հետո:
- Պետք է ապահովել Սփյուռքի նյութական, մասնագիտական և այլ մասնակցությունը հայրենադարձության գործընթացի բոլոր փուլերում:
- Պետությունը պետք է հատկապես խրախուսի սահմանամերձ և ազատագրված տարածքներում հայրենադարձների բնակությունը՝ այնտեղ նրանց տրամադրելով անվճար բնակարաններ, հատկացնելով տնտեսական և այլ կարգի արտոնություններ:
- Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարությունը պետք է ընդունի «Հայրենադարձության տարեկան ծրագիր», որտեղ, մասնավորապես, պետք է նշվեն այն բնակավայրերը, որոնցում հայրենադարձներին կարող է հատկացվել անվճար բնակարան, բյուջեով ֆինանսավորվող, վարկավորվող հայրենադարձվող ընտանիքների քանակը և այլն: Հայրենադարձության պետական ծրագրում պետք է կարևորվեն արդեն հայրենադարձված անձանց ու ընտանիքների հիմնավորման խնդիրները:

3. Հայրենադարձության ընդդիմախոսների հիմնական առարկությունները և դրա իրականացմանը սպառնացող խոչընդոտները

Հակիրճ անդրադառնանք հայրենադարձության իրականացման ընդդիմախոսների հիմնական առարկություններին:

Նշվում է, որ Հայաստանը տնտեսապես ի վիճակի չի լինելու ո՛չ իրականացնել հայրենադարձության լայնածավալ ծրագիր, ո՛չ էլ ընդունել և համարկել հայրենադարձների մեծաքանակ հոսքեր:

Այո՛, հայրենադարձության իրականացումը պահանջելու է մեծածա-

վալ միջոցներ, սակայն քաղաքականության պլանավորման դեպքում այդ միջոցների մեծ մասը կարող է տրամադրել Սփյուռքի տվյալ գաղութը: Միջոցների որոշ ծավալ կարելի է ակնկալել միջազգային կառույցներից և պետություններից:

Ինչ վերաբերում է հայրենադարձների հոսքերի համարկմանը, ապա այս խնդիրը ևս կարելի է լուծել պետության կողմից հայրենադարձների հոսքերի պլանավորման միջոցով:

Պետք է նաև հաշվի առնել այն, որ հայրենադարձվելու է ոչ միայն և ոչ այնքան Սփյուռքի կարիքավոր մասը, այլ նաև գործունյա, որոշակի տնտեսական և մասնագիտական կարողություններ ունեցող հատվածը, որը փորձելու է տեղում իրացնել իր տնտեսական և մտավոր դրամագլուխը՝ դրանով ստեղծելով նորանոր աշխատատեղեր և զբաղվածության ոլորտներ:

Մեկ այլ փաստարկ, որը հաճախ է օգտագործվում հայրենադարձության ընդդիմախոսների կողմից. Հայաստանի Հանրապետությունը պետք է առաջին հերթին լուծի առկա բնակչության առջև ծառացած խնդիրները, միջոցներ ձեռնարկի արտագաղթը կասեցնելու համար և այնուհետև միայն զբաղվի աշխարհասփյուռ հայության հայրենադարձությամբ: Սրան կարելի է առարկել, որ հայրենադարձությունն, ընդհակառակը, խրախուսելու է գործունյա և նաև ունևոր սփյուռքահայերի մուտքը Հայաստան, թույլ է տալու էապես բարելավել Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը՝ տնտեսության մեջ ներդրումների ծավալի ավելացման և նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով:

Այստեղ մենք պետք է փաստենք, որ Սփյուռքի գործարարների կապիտալների քիչ թե շատ նշանակալի ներհոսք ապահովելու համար մեր իշխանությունները չեն կարողանալու խուսափել տնտեսական դաշտում բարեփոխումներ իրականացնելուց, որոնց նպատակն է լինելու տնտեսական մրցակության իրական հավասարության ապահովումը:

Անշուշտ, այնպիսի բարդ գործընթաց, ինչպիսին հայրենադարձությունն է, ապահովագրված չի լինելու դժվարություններից և անհաջողություններից:

ա) Առարկայական գործոններ

Հիմնական առարկայական գործոնը ՀՀ ծանր սոցիալ-տնտեսական կացությունն է՝ դրանից բխող միջոցների սղությամբ, գործազրկության բարձր ցուցանիշներով, դեռևս շարունակվող արտագաղթով, ընդունված, բայց չգործող օրենքների առկայությամբ և այլն: Դրանք էականորեն դժվարացնելու են պետության հնարավորությունները հայրենադարձների համարկման գործում: Սակայն պետք է գիտակցել, որ հայրենադարձվել ցանկացող հայության հիմնական զանգվածը քաջածանոթ է Հայաստանում տի-

րող սոցիալ-տնտեսական վիճակին և, ընդունելով հայրենադարձվելու որոշում, չի առաջնորդվելու սոսկ տնտեսական նկատառումներով, այլ, գլխավորապես, հոգևոր-գաղափարական մղումներով, առաջնորդվելու է իր Հայրենիքում, իր հայրենակիցների հետ արժանավայել ապրելու ցանկությամբ: Դրանից ելնելով՝ հայրենադարձվելու սկզբնական շրջանում հայրենադարձը կարող է համբերությամբ տանել տնտեսական դժվարությունները, անշուշտ, այն դեպքում, եթե զգա պետության հոգատար վերաբերմունքն իր կարիքների նկատմամբ:

բ) Ենթակայական գործոններ

Հայրենադարձության գործընթացի կանոնակարգումն ու մեկնարկը խոչընդոտող ենթակայական գործոններն են միջկուսակցական մրցակցությունը, անտարբերությունը, ապիկարությունը, կաշառառությունը և այլն:

Հայաստանի ապագայով մտահոգված հայաստանյան և սփյուռքյան հասարակական կազմակերպություններն ու անհատները պետք է խիստ սթափ լինեն և ձեռնարկեն բոլոր միջոցները վերը նշված գործոնների վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանել հայաստանյան և սփյուռքյան հասարակական կազմակերպությունների վերահսկողությունը հայրենադարձության գործընթացի բոլոր օղակներում, պարտադրել հաշվետվությունների ճկուն համակարգ, գումարների ծախսման թափանցիկություն և այլն:

Որքան էլ դժվարին թվա, այնուամենայնիվ, խնդիրները լուծելի են: Դրա համար պետությունը պետք է դրսևորի քաղաքական կամք և վճռականություն:

Ի վերջո, անհրաժեշտ է գիտակցել, որ հայրենադարձության գործընթացն ազգային ծրագրի էական բաղադրիչներից մեկն է, դրա իրականացումը վեր է ամեն ինչից, բոլոր մասնավոր շահերից: Պետք է գիտակցել, որ նման մեծածավալ Սփյուռք ունեցող ցանկացած ժողովուրդ պարտավոր է ունենալ Հայրենադարձության ծրագիր և հայրենադարձությունը կարգավորող օրենքներ: Դա են պահանջում մեր պետության և ազգի շահերը:

Հայաստանի աշխարհագրական դիրքը կանխորոշում է իր ապագան: Մեր երկիրը կամ պետք է դառնա ժողովրդագրական վերարտադրության դրական ներուժով օժտված կայացած պետություն, կամ, ուշ թե շուտ, անհետանալու է երկրագնդի երեսից:

РЕПАТРИАЦИЯ КАК НОВОЕ НАПРАВЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННОЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ

Роберт Татоян

В докладе анализируются вопросы актуальности осуществления репатриации, рассматривается, решению каких проблем, стоящих перед Арменией и диаспорой, она может способствовать. Утверждается, что политику взаимоотношений со своими диаспорами Армении нужно строить не на основе противостояния процессам их ассимиляции, так как никакие меры, в конечном счете, не в состоянии остановить объективный процесс распада армянских общин, а исходя из основной цели по возвращению армян на свою историческую родину.

Во второй части доклада представлены основные положения программы по репатриации: включение процесса репатриации в число основных и постоянных функций армянской государственности, принятие регулирующих документов, в частности закона о репатриации, первоочередная организация репатриации из стран Ближнего Востока и России, где из-за целого ряда социально-экономических факторов существует более благоприятная для этого среда, предоставление льгот семьям репатриантов и т.д.

В третьей части доклада кратко рассматриваются основные возражения оппонентов организации репатриации, а также объективные и субъективные преграды, которые могут встать на пути ее осуществления. Утверждается, что проблемы, стоящие перед процессом репатриации, при проявлении необходимой воли и решимости в их урегулировании со стороны государства, в конечном счете решаемы. Нужно осознать, что любой народ, имеющий такую обширную диаспору, обязан иметь программу по репатриации.